27 հունվարի 2010թ.

Հարգելի պարոն Թումասյան

Տեղեկացնում եմ, որ քաղաքաշինության նախարարի՝ 2010 թվականի հունվարի 10-ի 04-Ա/3 հրամանով «Հայսեյսմշին» բաց բաժնետիրական ընկերությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների համար «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2009 թվականի ընթացքում բնակարանային շինարարության ծրագրի շրջանակում կառուցված ու կառուցվող շենքերի սեյսմակայունության գնահատումը:

Քաղաքաշինության նախարարի մեկ այլ՝ հունվարի 19-ի 06-Ա/3 հրամանով, Հայաստանի Հանրապետության Շիրակի եւ Լոռու մարզերում անօթեւան ընտանիքների բնակարանային շինարարության ծրագրով նախատեսված շինմոնտաժային եւ վերականգնողական աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը համակարգելու, ինչպես նաեւ այն ավելի արդյունավետ եւ նպատակային դարձնելու նպատակով քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի եւ Լոռու տարածքային բաժինների աշխատանքների համակարգումը՝ վերը նշված գործունեության բնագավառում, վերապահվել է քաղաքաշինական պետական տեսչության պետի-քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի տեղակալ Ա. Սարգսյանին: Հրամանի համաձայն, ամսական մեկ անգամ այդ ստուգումների արդյունքները քաղաքաշինական պետական տեսչության պետ-քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչ Ս. Հայրապետյանը պարտավոր է ներկայացնել նախարարի քննարկմանը:

Տեղեկացնեմ նաեւ, որ Ձեր նամակում արծարծված՝ շինարարության իբր «կասկածելի որակ» ունենալու վերաբերյալ, Ձեր իսկ բնորոշմամբ, «խոսակցությունները» իրոք ավելին չեն, քան խոսակցություն կամ, ավելի ճշգրիտ, ասեկոսե:

Ձեր պնդումը, թե իբր որեւէ պաշտոնյա այդ «խոսակցությունները» պատշաճ կերպով չի հերքել, չի համապատասխանում իրականությանը: Քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը մի քանի անգամ դրա վերաբերյալ հարցազրույց է տվել թե Գյումրիի հեռուստաընկերությունների լրագրողներին, թե հանրապետական թերթերին:

Տարօրինակ, եթե ոչ անհեթեթ է Ձեր հաջորդ եզրահանգումը, թե «նման տեղեկությունները իրոք արժանի են ուշադրության, քանի որ դրանք հիմնականում *տարածվում են* հենց նույն «Գլենդել Հիլզի» շինարարական աշխատանքներում ընդգրկված շինարարների կողմից»: Պարզվում է, որ, ըստ Ձեզ, գյումրեցի շինարարները հենց իրենք նախ կառուցում են որքան հնարավոր է անորակ, իսկ հետո այդ մասին տարփողում բոլոր խաչմերուկներու՞մ:

Եվ վերջում. ինչ որ փորձագիտական հանձնաժողովի ստեղծման գաղափարն անիմաստ է մանավանդ դրա՝ Ձեր պատկերացրած կազմի դեպքում: Ուղղակի հետաքրքիր է, թե ի՞նչ մեթոդներով են բնակիչը, լրագրողը եւ հասարակական կազմակերպության ներկայացուցիչը իրականացնելու «շենքերի որակի, ամրության եւ սեյսմակայունության *հրապարակային* փորձաքննություն»:

Հավելեմ, որ աղետի գոտում երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակարանային շինարարության ծրագիրը ամբողջ ծավալով շարունակվելու է 2010 թվականին, այդ նպատակով պետական բյուջեից հատկացված է 22 միլիարդ 50 միլիոն դրամ:

Հարգանքով

ՀՀ քաղաքաշինության նախարարի

մամուլի քարտուղար Բաղդասար Մհերյան